

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը Հանրապետության տոնի կապակցությամբ

27.05.2016



Միրելի հայրենակիցներ:

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Մայիսի 28-ի՝ Հայաստանի առաջին Հանրապետության տոնի կապակցությամբ:

Մայիսը հայ ժողովրդի համար եղել է հաղթանակների ու նվաճումների ամիս: Այդ նվաճումներից մեկն էլ 1918 թվականին Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորումն էր, հայոց պետականության հաստատումը՝ պետականության յոթդարյա կորստից հետո:

Պատմական ճշմարտություն է, որ Հայաստանի առաջին Հանրապետությունը գոյատևեց ընդամենը երկուսուկես տարի, սակայն այդ ընթացքում ստեղծված պատական կառույցը հիմք հանդիսացավ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության, որը հռչակվեց 1920թ-ին, իսկ այնուհետ՝ Հայաստանի Հանրապետության, որը հռչակվեց 1991 թվականին:

Թեև մեր ժողովրդի պատմական կեսագրությունը եղել է նաև անկումներով, այնուամենայնիվ պատմությունն արձանագրել է մի շարք հերոսական վերելքներ, որոնցից մեկը 1918 թվականի հերոսամարտի արդյունքում ձեռք բերված պետականությունն է:

Փառք ու պատիվ մաղթենք բոլոր նրանց, ովքեր կենաց ու մահվան կռիվ տվեցին, մեզ ավանդելով՝ այս մի բուռ երկիր և ապացուցեցին թշնամուն, որ 1918-1920թթ. Հայաստանի առաջին Հանրապետության գոյությունը մեր ժողովրդի ոչ միայն հայրենասիրության, այլև հայրենապաշտության վկայությունն է:

Հարգելիներս, բոլոր ժամանակների մեր նահատակների ու հերոսների կյանքի գնով մեզ հասած Հայաստան երկրի գորացումն ու հզորացումը մեր սերնդի գործն է, ի պատասխան նրանց թափված արյան և ի լրումն նրանց կիսատ մնացած երազանքների:

Կրկին շնորհավորում եմ Հայաստանի առաջին Հանրապետության տոնի կապակցությամբ: Մաղթում եմ բոլորիս խաղաղ օրեր և ամուր պետականություն: